

Յուն. 9.— Զանգուցեալ Մնացական Տէր Գաւթեան Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Գ. Ժեմարանի օգտին 2000 ուրլի կտակած լինելով, Սինօզը պատուիրեց Վրաստանի և Ռուսիայի Հայոց Կոնսիստորիային նրա ժառանգ երգուեալ հաւատարմատար Պետրոս Եարութիւնեան Բաղանթարեանցից ստանալ նոյն գումարը և ներկայացնել Սինօզին:

Յուն. 11.— Մահմեդական Մովսափ Արզուլահ օղլի փափագ յայտնած լինելով մտնելու Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ ծոցը, Սինօզը խնդրեց պ. Կառավարչապետի անօրինութիւնը:

Յուն. 14.— Նոյնպիսի խնդիր առաջարկուեցաւ քիւրդ Մատո Սամար օղլու համար:


Յուն. 21.— Սինօզը պատուիրեց Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիային Զանգ. Եղիսարէթ Կրասիլնիկեանի կտակատարից ստանալ յօդուտ Ս. Էջմիածնի կտակուած հազար ուրլին. մնացեալ կտակած դրամը յանձնել Եւջու Մեղրեցոց եկեղեցու երեսփոխանին և Եւջու Կուսանաց Մենաստանի մայրապետին. իսկ 24,000 ուրլու տոկոսի կէսը ստանալ և պահել Կոնսիստորիայի գանձարանում, մինչև Ղարաբաղի թեմի համար նոր առաջնորդ կարգուելը:

Յուն. 7.— Սինօզը խնդրեց Կովկասի պ. Կառավարչապետի թոյլտուութիւնը գնելու Եարութիւն Փարաջանեանցից 10,500 ուրլի արժողութեամբ մի գետին՝ Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրանոցի համար կրպակներ շինելու նպատակով:

Յուն. 9.— Պր. Կառավարչապետի 27 յունիս թիւ 6920 թոյլտուութեան համաձայն հրամայուեցաւ Վրաստանի և Ռուսիայի Հայոց Կոնսիստորիային մկրտութեամբ ընդունել Բիւրդ Եղիզ Օսման Ուլո օղլուն Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ ծոցը:

Յուն. 9.— Աստրախանի թեմի առաջնորդ Գեր. Արիստակէս Արքեպիսկոպոսի յայտարարութեան համաձայն Սինօզը գրեց օտար դաւանութեանց հոգեւոր գործոց Դեպարտամէնտին և խնդրեց որ թոյլտուութիւն տրուի Գիւլումանց Տ. Մեարոպ քահանային իւրա-

բանչիւր տարուայ ամառնային երեք ամիսը զնալ հօտուելու Սիրիւրիայի Լուսաւորչական հայերին:



ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԵԺԻՆ

ՎԵՍԵՍԵԼՈՒ ԾՆՈՐՀՐ.

«Ձի ոյր գոցի՝ տայի նմա եւ յաւելցի, եւ ոյր ոյն գոցի՝ եւ զոր ունիցին բարձի ի նմանն»:

Մատթ. ԺԳ. 12:

ԽՆՍՏ, ըստ երեսութիւն անարգաբար վճիռ՝ մանաւանդ մեր ժամանակակից սերունդի տեսակէտով, որ այնչափ ճառում է մարդոց հաւասարութեան մասին, յառաջ է վարում ազգատ բանուորի իրաւունքը հարուստ գործատիրոջ դէմ: Աշխարհի համար նոր բան չէ, որ զօրեղն ու ընդունակը յառաջ է գնում, իսկ թոյլն ու անպաշտօնը աւելի ու աւելի ետ մնում: Բայց մեծ անտեղութիւն կլինէր ի հարկէ մտածելը, թէ աւետարանը նուիրագործում է զօրեղի իրաւունքը թոյլի դէմ: Թիւրիմացութիւնը նորանից է, որ աւետարանը տարբեր կերպով է ըմբռնում զօրութիւն և մեծութիւն, քան սովորական աշխարհը: Ծա բուրյովին հեռու է այն մտքից, թէ մութ ճանապարհներով հարստութիւն զիգած պարսպ մեծատունը իրաւունք պէտք է ունենայ իւր զբամազլի զօրութեամբ աշխատաւորի գանձքախնդրով վաստակած կոպէկները նորա ձեռքից խլելու և գումար գումարի վերայ զիղելու: Բայց պահանջում է, որ բարոյապէս և հոգեպէս հարուստը իւր ներքին ընդունակութիւնները գործադրելու համար ընդարձակ միջոցներ ունենայ, օգտուէ նաև այն միջոցներով, որոնք անգործ ընկած են բարոյապէս անանկի և հոգեպէս ծոյլի մօտ:

Ամէն տեսակ վտասակի համար որոշ շնորհ, որոշ չափով ընդունակութիւն պէտք է. եթէ արեգակը հազար անգամ աւելի լուսաւոր լինէր քան այժմ է՝ ի՞նչ օգուտ կոյրին, երբ որ նա զուրկ է տեսնելու ընդունակութիւնից: Աերեյի շեղ խօսքն ասած միջոցին Փրկիչն իբրև նորօրինակ լուսոյ մի արեգակ կանգնած էր հրէից ժողովրդի հանդէպ և Սորա արտափայլած լոյսը տարածուում էր անխօր ամէնքի վերայ: Հարկաւոր էր միայն մի փոքրիկ ունակութիւն այդ լոյսը տեսնելու, որ հոգին հեղհեղէ լեցուէր նորա ճառագայթներով և տեսնելու կարողութիւնը գնալով աւելանար ու զարգանար: Բայց վայ՛ եթէ մէկը տեսնել կարող էր, և աչքը փակեց ու չտեսաւ. ընդունակութիւնը երկաթէ գործիքի պէս է, որ գործի մէջ սրուում է, անգործադիր մընացած՝ ժանգոտում և անպէտքանում: Եւ որովհետև Աստուած չի կամենում երբէք, որ իւր տուած շնորհներն անգործադիր մնան, ուստի պէտք է խէ ապաշնորհի ձեռքից նաև փոքր շնորհը և աստա շնորհ ունեցողին տայ, վերջնական նպատակն այն է, որ ամէն շնորհ իրեն համապատասխան գործադրութիւնը գանէ և հոգեւոր ու բարոյական բարիքն առատանան. այնպիսի նպատակ է դա, որին հասնելու համար Մախաթնաութիւնը չի խնայում շատ զօհեր տալ ճանապարհին:

Մենք մարդիկս շատ նեղօրրա ենք և մանր հաշիւներ անող. մեծ գործի համար մեծ աշխատանք գնելն ու զօհեր տալը շատ ծանր է գոյիս մեզ: Մենք պահանջում ենք, որ բոլորեքեան շնորհալի լինեն, բոլորեքեան հիշատակեամբ հարստութիւն, զօրութիւն, երջանկութիւն ձեռք բերեն. բայց Մախաթնաութիւնն այլ կերպ է անօրինել. Սորա տեսութիւնը շատ լայն է և շատ ընդարձակ են Սորա հաշիւները. այսօր թող է տալիս Սա, որ հարիւրը կորչի՝ դարեր յետոյ հազար ձեռք բերելու համար. Սորա գծած սահմաններում ոչինչ վատակ առանց աշխատութեան, առանց զօհաբերութիւնների չի լինում: Ինչպէս որ նիւթական — բնական աշխարհում կեանքը կոխ է և նիւթապէս զօրեղը յաղթանակում է այդ կուռի մէջ, այնպէս և հոգեւոր — բարոյական աշխարհում

անընդհատ կուռել պէտք է, և այդ կուռի մէջ ևս շատերն ընկնում են ու քչերն են յաղթանակ տանում: Մենք կոխը դադարեցնել չենք կարող, և դադարեցնել այն՝ կնշանակէր, կեանքը դադարեցնել. բայց մենք կարող ենք աշխատել, որ նիւթական զօրութիւնը չճնշէ հոգեւորին և բարոյականին, որ աստջիրը ծառայէ երկրորդին և ըստ կարելւոյն ընդարձակ սապարէզ բանայ նորա առաջ: Եւ երբ հակառակն ենք տեսնում ու մեր բարոյական զգացումը վիրաւորուում է, երբ տեսնում ենք, որ հոգեպէս զօրեղը ծառայում է նիւթականապէս զօրեղին՝ ընդունակը զուրկ է իւր շնորհը գործադրելու միջոցներից, որ անընդունակը բազմի բերմամբ յափշտակելի պինդ պահում է իւր ձեռքում՝ չպէտք է յուսահատուենք ու մտածենք, թէ անարդարութիւնն է իշխում աշխարհի վերայ. այլ համոզուած մնանք, որ վերջին յաղթանակը իսկական զօրեղինն է, և իսկական զօրութիւն՝ բարոյականը, հոգեւորն է միայն:



ԲԱՅԱՏՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ԿԵՏԵՐ

Ս. ԳՐԸԻ ՄՆՁ, *

«Ղ սա է հիւսանն որդի. ոչ մայր սորա կուռի Կարիսմ: Եւ եղբարք սորա՝ Յակոբոս և Յովհաննէս և Սիմոն և Յուդաս: Մատթ. ԺԳ. 55:

Մեկնարաններին շատ է գրադեցրել յիւրախ այն խնդիրը, թէ ովքեր են այստեղ Փրկիչ եղբայր կոչուածները: Մեր եկեղեցւոյ հայրերը արամադիր են եղել նոցա Յովսէփի որդիք համարելու՝ մի ուրիշ նախկին կնոջից, անշուշտ լոկ այն պատճառով, որ կկամենային մի կողմից աւետարանի խօսքի ճշտութիւնը պահած լինել, թէ նոքա եղբայր էին և միւս կողմից ս. Աստուածամօր անարտա կուսութեան դադարաբի դէմ մեղանշած շլինել: Այս վերջին տեսակէան ինկատի ունէին հար-

* Տեւ. Արարատ 1899 թ. համար Ը, էր. 327: